ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 24 փետրվարի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի

Անդամակցությամբ՝ Վ.Հովհաննիսյանի

Զ.Ղուկասյանի

Քննության առնելով Ռուբեն Թորոսյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

1.Քաղաքացի Ռուբեն Թորոսյանը 10.02.2009թ. դիմել է սահմանադրական դատարան վիճարկելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին պարբերությամբ և 64-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթների սահմանադրականությունը:

2.Դիմողը միջնորդում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի (ժդ) կետի հիմքով իրեն ազատել պետական տուրքի վճարման պարտականությունից:

3. Քաղաքացի Ռ. Թորոսյանը սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում նշում է, որ «օրենքի վիճարկվող դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 12-րդ, 14.1-րդ և 19-րդ հոդվածներով սահմանված համապատասխանաբար «ՀՀ պետական լեզուն հայերենն է», «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև» և «յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու ..... դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք» դրույթներին»:

Ըստ դիմողի «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի առնչությամբ «նման խնդիրներ չէին ծագի, եթե «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով սահմանվեր, որ ՍԴ

որոշումներ ու եզրակացություններ ստորագրողը պատասխանատու է դրանց շարադրանքի, այդ թվում, հայերեն լեզվի և իրավաբանական տերմինների ճիշտ /սահմանադրորեն/ օգտագործման համար»:

Ըստ նրա «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասը հակասում է Սահմանադրությանը այն պատճառով, որ անորոշ է ձևակերպված:

4.«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածի 3-րդ մասին 3-րդ պարբերության համաձայն .«Դիմողի միջնորդության հիման վրա նրան պետական տուրքի վճարումից ազատելու հարցը սահմանադրական դատարանը լուծում է անհատական դիմումը քննության ընդունելու հարցը լուծելու հետ միաժամանակ՝«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:

Դատարաններում պետական տուրքի գծով արտոնությունները սահմանված են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22 հոդվածով, որի ժդ) կետի համաձայն պետական տուրքի վճարումից ազատելու արտոնություն ունեն. «դիմողները՝ ընտրելու և (կամ) ընտրվելու իրենց իրավունքների խախտման վերաբերյալ դիմումներով»:

Սահմանադրական դատարան հասցեագրված իր դիմումով քաղաքացի Ռ. Թորոսյանը բարձրացրել է օրենքի դրույթի սահմանադրականության հարց, որի համար «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22 հոդվածով պետական տուրքի վճարումից ազատում նախատեսված չէ:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 27 հոդվածով և ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 25 հոդվածի 2-րդ մասով Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

Չբավարարել պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ քաղաքացի Ռուբեն Թորոսյանի միջնորդությունը և դիմումի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝